

## 1. Ծառայությունից օգտվելու կարգը

Պատվիրատուն՝ ֆիզիկական անձ լինելու պարագայում, գրանցում է իր անձնական էջը [www.1host.am](http://www.1host.am) կայքում՝ նշելով իր անունը, ազգանունը, գրանցման հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, անձը հաստատող փաստաթղթի համարը, իր նախընտրած գաղտնաբառը, իրավանական անձը լինելու պարագայում՝ մուտքագրում է կազմակերպության անունը, իրավաբանական հասցեն, էլ. փոստի հասցեն, հեռախոսահամարը, ՀՎՀՀ և իր նախընտրած գաղտնաբառը:

Գրանցման հայտն ուղարկելուց հետո Պատվիրատուն 24 ժամվա ընթացքում համակարգում մուտքագրած էլ. փոստի հասցեին ստանում է գրանցումը հաստատող ծանուցում: Տվյալները ոչ ամբողջական լրացնելու դեպքում ծանուցումը պարունակում է թերի կամ սխալ լրացված դաշտերի փոփոխման հարցում և տեղեկացնում է գրանցման չկատարման մասին:

Հաստատում ստանալուց հետո պատվիրատուն մուտք է գործում անձնական էջ՝ որպես նշանաբառ օգտագործելով իր էլ. փոստի հասցեն, որպես գաղտնաբառ՝ իր կողմից ընտրված գաղտնաբառը: Պատվիրատուն հնարավորություն ունի փոփոխել գաղտնաբառն իր անձնական էջում:

## 2. Վճարման կարգը

Իր կողմից նախընտրած տեղակայման համար Պատվիրատուն կարող է վճարումն իրականացնել բանկային փոխանցման միջոցով համաձայն [www.1host.am](http://www.1host.am) կայքում ներկայացված գնացուցակի, եթե այլ պայմանավորվածություն չի ձեռքբերվել Պատվիրատուի հետ:

Վճարումը կատարելուց հետո Պատվիրատուն ստանում է Տեղակայում ծառայության համար կտրոն, ինչի մեջ նշված են վճարման օրը, ժամը, րոպեն, գումարի չափը, վճարային համակարգի անվանումը:

## 3. Տեղակայման ծառայության իրականացում

Տեղակայման գործընթացն իրականացվում է Պատվիրատուի կողմից իր իսկ անձնական էջից՝ ղեկավարվելով անձնական էջում ներկայացված ընտրանիով, որը պարունակում է նաև տեղակայման հնարավորություն: Ընտրելով տեղակայման տարբերակը և լրացնելով պահանջվող դաշտերը:

Պատվիրատուն իր ղեկավարման վահանակի վրա սեղմում է ինտերֆեյսի վրա արտացոլված «Ուղարկել» կոճակը: «Ուղարկել» կոճակի սեղմելուց հետո Պատվիրատուն Կատարողից ստանում է ծառայության կարգաբերման նկարագրով հաստատման նամակ, որը պարունակում է ղեկավարման վահանակի հասցե, նշանաբառ և գաղտնաբառ: Հաստատման նամակը ստանալուց հետո երեք օրվա ընթացքում Պատվիրատուն պետք է կատարի ծառայության դիմաց վճարում իր կողմից ձեռք բերված կտրոնով: Տեղակայման ծառայության սկիզբ է համարվում վճարում իրականացնելու օրը:

Տեղակայման ծառայության ավարտից 15 (տասնհինգ) օր առաջ Պատվիրատուն կոնտակտային էլ. փոստի միջոցով տեղեկացվում է տեղակայման ծառայության ավարտի ժամկետի մասին: Ծառայությունը դադարեցվում է վճարում չկատարելու պարագայում: Տեղակայման ծառայության նոր վճարում իրականացնելուց հետո ծառայությունն ակտիվանում է:

Տեղակայում ծառայության համար ձեռքբերված կտրոնի վերադարձ չի կատարվում, Պատվիրատուն հնարավորություն ունի իրականացնել փոխհատուցում, ինչի չափը հաշվարկվում է չմատուցած ծառայության ժամկետի համար փաստացի մնացած գումարի չափով, մինչև ժամանակակից հաշվի է առնվում բանկի կողմից գանձված միջնորդավճարը:

#### **4. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները**

Պատվիրատուն պարտավոր է չօգտագործել Տեղակայում ծառայությունը որպես միջանցիկ (proxy) սերվեր:

Տեղակայման համար ենթակա տեղեկատվության պահեստային տարբերակը պահպանվում է 1 ամսվա ընթացքում:

Կատարողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից իր կայքում տեղադրված բովանդակության համար:

Եթե Պատվիրատուի կողմից տեղակայած տեղեկատվությունը ծանրաբեռնում է տեղակայող սարքավորման աշխատանքը, հնարավոր է տեղակայման ժամանակավոր դադարեցում՝ մինչև խոչընդոտող գործոնի ազդեցության դադարեցումը: Կողմերը կարող են իրականացնել խանգարող գործոնի ախտորոշումը համատեղ քննարկումների միջոցով:

Եթե Պատվիրատուն կամ երրորդ կողմը Պատվիրատուի ծրագրի օգտագործման հետևանքով անընդհատ զանգվածային տեղեկատվության փոխանակում է իրականացնում, ինչը կարող է էականորեն ծանրաբեռնել միջազգային համակարգչային ցանցի աշխատանքը կամ սպառնալ այդ ցանցի անխափան աշխատանքին, ցանցի օգտվողների անձնական կյանքի պաշտպանվածությանը կամ համակարգչի աշխատունակությանը, Կատարողն

իրավունք ունի կասեցնել ծառայությունների մատուցումը մինչև խոչընդոտող գործոնի ազդեցության դադարեցումը:

Զանգվածային տեղեկատվության փոխանակում է հանդիսանում, մասնավորապես, սակայն չսահմանափակված, միննույն էլեկտրոնային հասցեից 10 և ավելի այլ էլեկտրոնային հասցեներին նամակների անդադար ուղարկումը: Սույն կետով նախատեսված տեղեկատվության փոխանակման հետևանքով երրորդ անձանց պատճառված վնասների համար պատասխանատվություն է կրում Պատվիրատուն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Եթե Պայմանագրով նախատեսված ժամկետում Պատվիրատուն չի վճարում իր կողմից գնված տեղակայման համար կտրոնով տեղակայման ծառայության առնվազն մեկ օրվա գինը, տեղակայումը կասեցվում է, միննույն ժամանակ տեղակայման տեղեկատվությունը պահպանվում է կասեցման օրվանից հաշված 20 (քսան) օր:

Տեղակայվող տեղեկատվությունը չպետք է հակասի ՀՀ օրենսդրությանը:

## 5. Վեճերի լուծման կարգը

Կողմերը բոլոր վեճերը լուծում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սույն Հատուկ Պայմանները տեղադրված են Կատարողի պաշտոնական կայքում (<http://www.1host.am/>):

Սույն Հատուկ Պայմաններում եզրույթներն ունեն նույն նշանակությունը ինչ ԸՂՊ-ում:

Պատվիրատու՝

Կատարող՝  
ԱԶ Գրիգոր Ֆարիշյան  
Սարյան 31 բն 10,  
ք, Երևան, 0002, ՀՀ  
ՀՎՀՀ: 81184276